Ապա սկսեցին խուզարկել նրա ինչքերը և գտան մի բեռ կանացի զգեստներ, կեռ կոշիկներ, կերպասից ոտաց շորեր, ոսկետուտ լաչակներ, երեսի ոսկեզարդ քող և այլ այսպիսի կանացի զարդարանքներ:

Ահա նրան ասացին՝ ո՞ւր եք թաքցրել արքայական հրամանագրերը և կալվածների կապալները: Նա ուրացավ, թե չգիտեմ: Ապա նրա ոտքերը կոճղ դրին և այնքան բրածեծեցին բանտում, մինչև որ իր քրոջ որդուն ուղարկեց Երևան քաղաքը և բերել տվեց ամենը: Թղթերի մեջ կային արքունի գրություններ՝ 1) կաթողիկոսության վերաբերյալ, 2) բոլոր եկեղեցականների նրան հնազանդ լինելու մասին, 3) իր ազգակիցների մելիքության մասին: Ապա նրան ուղարկեցին Սևանա կղզին՝ դնելու մի սենյակում և ոչ ոքի թույլ չտալ մտնելու նրա մոտ: Այնտեղ օրեր մնալով սրտի տրտմությունից և մեծ վշտից հեծեծանքներով մեռավ և մեջտեղից վերացավ, արժանի չեղավ օրինավոր մահով մեռնելու:

ԳԼՈՒԽ ԽԵ
ՄՅՈՒՍ ՍԱՖԻԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լեզգի Սաֆի խանի կործանումից հետո Երևան ուղարկվեցին իբրև տեղապահ Սարուխան բեկ անունով մեկը երկու տարի և Սաֆիղուլի խանը, որ Թավրիզի Ռոստոմ խանի որդին էր: Սա եկավ նստեց Երևանում և սկսեց նորաբույս չարիքներ գործել: Թավրիզ ուղարկեց և այնտեղից բերել տվեց բոզ կանայք, բոզեր պահել բոլորովին մեր երկրի համար սովորույթ չէր: Սա այդ էլ հաստատեց: Հրաման հանեց, թե անձրևի օր քրիստոնյաները տնից թող դուրս չելնեն, քանզի գարշելի հոտ է արձակվում նրանցից և մահմեդականներին ապականում է: Նաև արգելք դրեց՝ այսինքն՝ դաղաղա, թե հարուստներից և օտարականներից ով էլ մեռնի, առանց իմ հրամանների չպետք է թաղել՝ ոչ քրիստոնյայի, ոչ էլ մահմեդականի: Նաև բազմացան ճանապարհներին ավազակները, շեներում գողերը, այս պատճառով ոչ ոք չէր կարողանում ճանապարհ գնալ, որովհետև կողոպտում էին: Բազմաթիվ եկեղեցիներ գողեր մտան ու ավարեցին: Այսպես, այս ամբողջ երկիրը գտնվում էր մեծ տա-

ռապանքների մեջ: Սրա համար բոլոր մահմեդականները հավաքվեցին և խորհուրդ արին. իրենց ղեկավար նշանակեցին Ֆաթալի անունով մեկին և անվանեցին իրենց Ղարափաչա*: Մտածեցին խանին կորցնելու մասին՝ ասելով, սա բոզեր բերեց այստեղ, և ամենքը այցելում են նրանց, իսկ օրինական կանայք արհամարհվում են: Ասում է՝ անձրևի օրերին քրիստոնյաները թող դուրս չգան. մենք ահա դրացի ենք քրիստոնյաներին և խառնիխուռն ենք նրանց հետ, առևտուրը միասին է լինում, նրանցից շատ շահ ենք ստանում, իսկ սա կամենում է մեզ զրկել մեր շահերից: Ասում է՝ քրիստոնյաների աղոթարաններում թող մահմեդական չմտնի, իսկ արդ՝ մեր բոլոր ցավագարներին եկեղեցիներն են բժշկում, նաև մեր զվարճատեղերը եկեղեցիներն են: Ասում է մեռելներին առանց իմ հրամանների մի թաղեք, ուրեմն կամենում է մեռելներից էլ հարկ առնել: Գողերին չի պատժում, այլ տուգանքներ է առնում ու թողնում, իսկ նրանք դարձյալ գողություն են անում: Նրա այս և այլ բազմաթիվ չարիքները գրեցին և թագավորական սուրհանդակի միջոցով ուղարկեցին շահին, իսկ իրենք հարձակվեցին խանի վրա, մտցրին տուն և չթողին դուրս գա: Նաև կնքեցին բոլոր ամբարների դռները, չափով էին նրան կերակուր տալիս: Եվ այսպես տառապանքով պահեցին նրան, մինչև որ այլ խան եկավ, և նրան հալածեցին: Նա ելավ գնաց Սպահան, և մեր երկիրը խաղաղվեց:

ԳԼՈՒԽ ԽԶ
ՏԵՐ-ՀԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀԸ

Երբ մեծ հայրապետ Հակոբը Ղազվինից վերադարձավ և եկավ իր Աթոռ Սուրբ Էջմիածին, խանը նույնպես եկավ Երևան: Կարդացին խանի հրամանագիրը, նրանում գրված էր, թե առանց կաթողիկոսի ոչ մի բան չանես: Նա (Կարկուտը) վիրավորվեց և խեթ էր նայում: Նաև պարտատուները, որ Կարկուտին փոխարինաբար դրամ էին տվել ու մուրհակ էին առել Սուրբ Էջմիածնի անունով, գալիս պարտքերն էին պահանջում: Իսկ կաթողիկոսը ձանձրացավ բազմաթիվ պարտատուներից, ուստի առանց խանի գիտու-

*Ղարափաչա նշանակում է Սևասրունք: